

ԿԱՅԱՆ ԲԵՐԴ ԵՒ ԿԱՅԵՆՈՅ ՁՈՐ

Զորագետի նշանաւոր հնութիւններից են՝ Կայան բերդը և Կայենոյ ձորը, որոնց մասին այժմ պատմելու եմ մանրամասնօրէն՝ տառնաձին-առանձին: Հաղթատից չորս վերստ հեռաւորութեան վրայ՝ ծուռ գծով, դէպի արևմուտք, մէկ բարձր սարի գլխին՝ գտնուում է Կայան բերդը, որ այժմ աւեր է: Սրա արևելեան կողմը ձգուում է անդնդախոր Ել-րէկի ձորը, որի միջովն է անցնում փիվանքայ գետակը, քերելով Բերդի լեռան փեշերը. արևմտեան կողմն է Դերեգայ գետի դարձեալ անդնդախոր ձորը, որի միջովն է հասում ահեղագոչ համանուն գետը. հիւսիսային մասը կազմում է մեր վերև յիշած մեծ ձորերի միացումից գոյացած ձորը, ուր խառնուում են վերև ակնարկած ջրերը՝ «Մարգասպանի» քարափի տակին: Մեր ասած ձորերի խորութիւնը, ուղիղ գծով, մէկ վերստից աւելի է: Բերդի հարաւային կողմը գտնուում է Որնակ գիւղի տափը, որի ճիշտ հիւսիսային ախլ՝ վերջանալով ուղղահայեաց միապաղաղ քարափով, ցածրանում է՝ մօտաւորապէս յիսուն սոժէն խորութեամբ, և սպա, թամբուց կազմելով, հեռահեռէ բարձրանում է քարաժայռերով, որոնց գլխին է գտնուում բերդը. այդ թամբուցի լայնութիւնը՝ բերդից մինչև Որնակայ տափի քնթանը, ուր գտնուում է և՛ պատմական նշանակութիւն ունեցող «Հակառակամտաբ», մօտաւորապէս հարիւր սոժէն է: Այսպէս ուրեմն՝ բերդը չորս կողմից պատած է ձորերով, որոնք անառիկ գիրք են շնորհել իրան—աւազակաշարոյ հրոսակների դէմ պաշտպանուելու, որպիսի գեր և՛ իրաւամբ կատարած է իւր ժամանակին: Բերդը երկու մասից է կազմուած, ստո-

րին և վերին, որոնք միմեանց հետ միացած են սանդուղա-
 ձև միջնագոնով. բերդի երկարութիւնն է, հարաւից-հիւսիս
 ուղղութեամբ, մօտաւորապէս մէկ քարքնկէց, իսկ լայնու-
 թիւնը՝ 25 արշին, ամենալայն տեղը: Բերդը պարսպապատ
 է, իւր ամբողջ շրջապատում ունենալով մի քանի հաստա-
 հիմն կիսակլոր բրջեր, որոնց շրջապատն է 5-ից մինչև 15
 արշին: Բերդի արևելեան կողմը, մի ընդարձակ քարածալուի
 վրայ, կառուցած է ս. Աստուածածնի, սրբատաշ քարից շին-
 ուած, եկեղեցին, որից սկսած՝ դէպի հիւսիս, մինչև առա-
 ջին բուրջը, 25 արշին է, իսկ երկրորդից էլ մինչև երրորդ
 բուրջը—20 արշին. հասնելով մինչև ներքին գուռը՝ 18
 արշին է, իսկ այստեղից էլ ցածրանալով և մտնելով ստո-
 բին մասը—11 արշ.: զնալով մինչև առաջին բուրջը՝ 17
 արշ. է, իսկ մինչև քնթանը, կամ վերջին բուրջը՝ 23 ար-
 շին. այստեղից պարիսպը պտտւում է դէպի արևմուտք և
 ապա դէպի հարաւ, ու հասնում երրորդ բրջին 34 արշ.
 տարածութեամբ. իսկ սրանից էլ զնալով 26 արշին մինչև
 չորրորդ բուրջը՝ հասնում ենք մի պտտուական կամարակապ,
 սրբատաշ քարերից շինած, դռան, որն այժմ քանդուածքի
 քարերով լցուած է:—Սա է ծառայել իբրև ընդհանուր գու-
 ռը բերդի Այս դռանից մէկ պտտ անցնում է դէպի վերին
 մասը և միանում 9 արշ. կիսաշրջապատ ունեցող բրջի
 հետ, որից լետոյ պատը գնում է ուղիղ դէպի հարաւ և
 հասնում մինչև երկրորդ բուրջը՝ 19 արշ. միջատարածու-
 թեամբ, իսկ այստեղից էլ պատը զարձեալ հարաւային ուղ-
 զութեամբ հասնում է երրորդ բրջին՝ 18 արշ. ձգուածքով,
 լետոյ չորրորդին—29 և ապա հինգերորդին—16 արշ. տա-
 րածութեամբ. այստեղ պարիսպը պտտւում է թամբուցի
 գլխի քնթանումն և կազմում ինն արշ. շրջապատով բուրջ,
 որի մէջն է գտնուում դժուարագնաց մուտքը. մուտքից 10
 արշ. զնալով՝ հասնում ենք մի փոքր բրջի, իսկ այստեղից
 էլ 11 արշ. կտրելով՝ հանդիպում ենք, ուղիղ արևելեան
 երեսումն, մի մեծ բրջի, որի շրջապատն է 15 արշ., իսկ
 այս բրջից էլ զնալով 13 արշին, հասնում ենք կրկին եկե-

ղեցուն: Պարիսպը մրճատաշ է, կրողանգ և սարսափելի ամուր. բոլոր բըշերի վրայ կան կարմիր քարէ փոքրիկ խաչեր՝ առանց արձանագրութիւնների:

Վերև լիշած եկեղեցին կառուցել է Ջաքարէ և Իվանէ սպասալարների քուերորդի Յովհաննէս արքեպիսկոպոսը, Հաղբատայ առաջնորդը, որի համար և՛ եկեղեցու արևմտեան դռան գլխին այս հետևեալ հայերէն գրութիւնն է արձանագրել.

«ՈՉԲ. Կամսան Աստուծոյ եւ Տէր-Յովհաննէս, առաջնորդ Հաղբատայ, քուերորդի մեծի Պատրոնայ Ջալարէի եւ Իվանէի 'ի ժամանակի, որ եմաս սասանումն աշխարհիս մերոյ յանաւրէն Խորագմեանց, ո՛չ գոյր տեղի սալաստանի սուրբ Նշանիս եւ եղբարցս. հրամանաւ քնոյն իմից Իվանէի եւ որդոյն իւրոյ Ասագին եւ Շահնշահի որդոյ Ջաքարէի՝ շինեցի զամրոցս եւ զեկեղեցիս Հաղբատայ սուրբ Նշանիս՝ ըստում՝ աշխատութեամբ: Արդ՝ եթէ ոք զսա 'ի Հաղբատայ հանէ թէ՛ 'ի մեծաց. թէ՛ 'ի փոքունց զինչ եւ իցէ պատճառաւ՝ մարդն այն նզովեալ եղիցի 'ի մահուան եւ 'ի կենաց յԱղամայ մինչև 'ի գալուստն Բրիստոսի՝ ինչ նզովք կայ 'ի վերայ նորա. եղիցի եւ երեսալ եւ տատանեալ որպէս Կայէնի, եւ ըսթին Յուդայի աոցէ եւ տանդիչ հոգոյ նորա սասանայ լիցի եւ առաջնորդ սորա, որ կամասոր նախանձու կամ՝ ծուլութեամբ կամ՝ կաշտաւք զսա 'ի Հաղբատայ հանէ՝ զվերոյգրեալ նզովքն աոցէ եւ որք հաստատին— աւրնին յԱստուծոյ եւ պարտին ինձ Տէր-Յովհաննիսիս զԱստուածածնի տանի գ. աւրն 'ի սմա պատարազն ինձ մատուցանել:—

Եկեղեցին սրբատաշ քարից է շինած. երկարութիւնն է 6 արշ. 10 վերշ. լայնութիւնը 4 արշ. 6 վերշ., սեղանի բարձրութիւնն է— $1\frac{1}{4}$ արշ. լայնութիւնը— $3\frac{3}{4}$ արշ. խորութիւնը— $2\frac{1}{2}$ արշ. ունի մէկ դուռը, մարդաչափ բարձրութեամբ, իսկ մէկ ու կէս արշ. լայնութեամբ, արևմտեան կողմը. եկեղեցու բարձրութիւնը մինչև կաթողիկէն է 12 արշ.: Եկեղեցու երկու կողմն կան զօլարներ. նրանցից մէ-

կու՛մ՝ այն է՝ աջակողմեանումն են պատմում, թէ՛ փախստեան ժամանակ բազմեցրած են եղել Հաղըատայ հոջակաւոր սուրբ Նշանը: Բերդի մէջը կան շատ տների տեղեր, որոնք լաւ տաշուած քարերով են լցուած. նրանցից երկուսի միայն պատերն են կանգուն, որոնցից առաջինի երկարութիւնն է 6 և լայնութիւնը—5 արշ., իսկ երկրորդի երկարութիւնն է 19 արշին. պատմում են թէ՛ վերջինս է եղել Վարդան Բարձրբերդցու ուսումնարանը. միայն այդ ճիշտ չէ. որովհետեւ Բարձրբերդցին եղել է Կայննոյ ձորի Անդրէի մենարանում, որի մասին ստորև կապտմենք: Բերդի եկեղեցւոյ գմբէթը 1827 թ. սաստիկ երկրաշարժից կործանուեց. միայն 1838 թ. հարազատ եղբայր՝ Մարգար, Վարդան և Յարութիւն՝ Երզնկեանցները նորոգել տուեցին իրանց ծախքով, հին ձևով և դրութեամբ. այս եկեղեցու հիւսիսային պատի տակն՝ դուրսն, է թաղած և՛ նորոգողների մեծ եղբայր Մարգարը 1842 թ.: Այս բերդի մէջ ապաստանուածների համար ջուր է հասցրած եղել Որնակ գիւղի սարերից, որտեղից սզունգերով ջուրը բերուել է մինչև քարափի քրնթանը, իսկ լետոյ փոքրիկ «մտով» ցած է տարուել թամբուցը, որտեղից էլ, բարձրացնելով՝ լանջասեւով, մինչև վերին բերդը, ուր և՛ նայն իսկ եկեղեցու դռան առաջ բաւականին մեծ քարուկրեայ աւազան է շինուած, միայն այժմ լցուած: Այս աւազանից էլ ջուրը դարձեալ գունգերով տարուել է՝ ներքնագոնի ձախ բրջով՝ մինչև ստորին մասը. այժմս էլ այդ բոլոր խողովակները, ինչպէս թամբուցումն, այնպէս և՛ բերդերի երկու մասերումն՝ երևում են: Ջուրը այդ բարձր տեղն է տարուել այն Ֆիդիքակոն օրէնքի հիման վրայ, որ բերդի նստուածքը ակնատեղից ցածը լինելով, և ջուրն էլ ձգտելով միակերպ բարձրութեան հասնել երկու խողովակների մէջ, միակ ելք է գտել դուրս գալու միայն ցածր խողովակից՝ բերդի մէջ: Այս բերդին տեղացիները անուանում են «Տէս և անց», իսկ աղջատած բառով—«Տըսեանց». սրա մասին լիշում է և՛ պատմագիր Զաքարիա սարկաւազը՝ ասելով, թէ՛ շարժ եղաւ, որից և՛ կոր-

Ճանուկաց Հաղբատայ և Սանահնի մէջ գտնուած բերդը, որ կոչուում է «Տեսեանց», այդ անունը թերևս անառիկութեան պատճառով է տրուած. այս առաջ բերելով, մենք սրանով ուղղում ենք և՛ մեր. հօրեղբայր Ռաստմբէգ Երզնկեանցի արած սխալ բացատրութիւնը իւր «Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ» աշխատասիրութեան մէջ, ուր «տեսեանց» բառը «Իրսի վանք» բառով է պարզաբանում:

Ժամանակագրական տեսակէտից նայելով՝ այս բերդը շատ հին է. սրա կառուցման սկզբնաւորութիւնը յայտնի չէ. միայն երևում է, որ Բագրատունեաց ժամանակ անուանի բերդերից մէկն է եղել, որին տիրապետել է Սահակ իշխանը, Աշոտ երկաթի աները (922 թ.), իսկ Աշոտ-Ողորմածի որդի Սմբատ թագաւորի ժամանակն էլ տիրապետութեան իրաւունքը անցել է իւր եղբայր Գուրգէնին, որի համար պատմաբան Չամչեանն ասում է. «Իսկ կրտսեր եղբայր նորա Գուրգէն հաւատարիմ երևեալ՝ ժառանգեաց հրամանաւ նորա զՏաշիր և զՏաւուշ-Սևորդովք Զորոգետոյն և զԿայան և զԿայծոն և զԽոռակերտ և զԲաղկերտ և զայլ ևս բերդս անուանիս ըստ Վարդանայ» (982 թ.): (Այս բերդերը այժմ չեն էլ կան և բոլորն էլ Զորոգետումն են, բացի Տաւուշից (Թովուզ): Մի ժամանակ Կայան բերդին տիրապետում էր և՛ Պահլաւունի ցեղը՝ Կայծոն և Բջնի բերդերով հանգրծ: Ոմանք պատմաբաններից սխալմամբ այս բերդը Կայան չեն համարում. սորա հերքման համար բաւական են մեր վերև յիշած պատմական քաղուածքները և այն տկնարկները, թէ՛ Կայանը գտնուում է «Հաղբատայ և Սանահնի մէջ»: Միայն մի պատմական թիւրիմացութիւն կայ, որի վերայ հարկաւոր է ուշագրութիւն դարձնել: Բերդի եկեղեցու վրայ եղած արձանագրութիւնը ցոյց է տալիս, որ ամբողջ և թէ՛ եկեղեցին կառուցել է Ջաքարէի և Իվանէի քուերորդի՝ Հաղբատայ առաջնորդ Տէր-Յովհաննէս արքեպիսկոպոսը 1233 թ. Քրիստոսի կամ ըստ Հայկականի—ՈՁԲ, Բայց մէթէ կարելի է այս ստորգ համարել, քանի որ բերդի գոյութիւնը վաղուց է յայտնի. հաւանական է միայն եկեղեցու կառու-

ց ու մն, իսկ բերդի էլ վերանորոգումն, այլապէս՝ ուլտ-
մտկան փաստերն իրար հակասում են: Այս բերդումն ամ-
բացաւ՝ զաւտոյի բնակիչներով հանդերձ, ըստ Կիրակոս պատ-
մագրի, Աթաբէգ Իվանէի որդի Աւագ իշխանը – թաթարնե-
րի Չորմազան խանի յարձակման ժամանակ, երբ վերջինիս
զօրավար Իսուղատան շատ զօրքով բերդը պաշարել էր:
Աւագ իշխանը կամենալով պաշարող զօրավարի սիրտը շա-
հել՝ իւր զուտորը կնուլթեան տուեց, իբրև տարեան գինն,
միայն սրանով էլ բանը յաջող չվերջացաւ, որովհետև պա-
շարումն աւելի սաստկացաւ, իսկ երբ բերդի ծածուկ բերած
ջուրն էլ գտան և կտրեցին, այն ժամանակ պաշարուածնե-
րը շատ նեղն ընկան: Աւագ իշխանը մօտալուտ կորուստը
նկատելով՝ պատգամաւոր ուղարկեց ընծաներով Չորմազա-
նին, Գեղարքունի ծովի մօտ, գթուլթիւն հայցելու և պա-
շարումն ու բնակչաց նեղութիւնը վերացնելու, որը և՛ կա-
տարուեց, իսկ սրա հետ էլ զարձեալ տէր և կառավարիչ
կարգուեց իւր տիրապետած երկիրների, երբ անձամբ ներ-
կայացաւ Թաթարաց մեծ Նուրիին (Թագաւորին)՝ զար-
ձեալ մեծ ընծաներով:

Վերևը յիշեցի, որ ամբոցի հարաւային կողմը, դէպի
Որնտկայ տափը, թամբուցում, մէկ փոքրիկ բնակարան (ճա-
նապարհ) է գտնուում, որը պատմական նշանակութիւն ունի.
և ահա այսպէս: Հարց ծագեցաւ Չաքարիա սպասալարի կող-
մից, Յունաց ձեով, Աստուածածնի և Խաչի տօնը կատարել
այն օրը, ինչ ժամանակ կ'պատահի, և թէ շարժական վի-
ճով էլ վրանում պատարագ մատուցանել: Այս առաջարկու-
թիւնները Կիլիկիայի Հայոց Յովհաննէս և Դաւիթ կաթողի-
կոսները և Լևոն թագաւորը ընդունեցին: Չաքարիա սպա-
սալարը արևելեան եկեղեցիներում ընդունել տալու նպատա-
կով՝ Լօսի քաղաքում նշանաւոր եկեղեցականներից ժողով
գումարեց, որը անօգուտ անցաւ սպասալարի համար, որով-
հետև ժողովականների մեծ մասը հակառակ էր, ուստի և
ցրուեցան: Զ. սպասալարը կամեցաւ բռնի զօրութեամբ ե-
կեղեցիներում տարածել, որը և՛ շատ տեղ ընդունեցին առ

ահի. մնացել էր միայն Հաղբատը, որի ձայնը մեծ ազդեցութիւն ունէր: Սպասաւորը ուղարկեց Կիլիկիայի կաթողիկոսների կողմից նշանակուած պատգամաւոր և ընծայաբեր Մինաս եպիսկոպոսին Հաղբատ: Սա իւր ուղեկիցներով Սանահին անցաւ և ճանապարհ ընկաւ գէպի Հաղբատ, ուր այդ ժամանակուայ առաջնորդն էր մեր սրբազօր Գրիգորիս եպիսկոպոս Տուտէորդին. սա իմանալով Մինաս եպիսկոպոսի գալը, ընդգիծագրութեան նպատակով մի քանի մարդ ուղարկեց առաջը, որոնք գտան «Մտի» գլխին՝ իջած հանգստանալիս: Սրանք այստեղ Մինաս եպիսկոպոսին մահամերձ բրածեծ արին, իսկ ջորիներն էլ քարավէժ ստակեցրին: Տուտէորդին այս գործից յետոյ թողնուած է Հաղբատը և թագում Չաքարիա սպասաւորի սպառնալիքներից Կարնոյ երկրում: Փոփոխած արարողութիւնները ընդունող եկեղեցիները տեսնելով Տուտէորդու անձնուէր վստահութիւնը, իրանք և սմերժեցին նորաձևութիւնները և սկսեցին դարձնալ մեր Հայկական նախնի ձևով վարուել, ինչպէս մինչև այժմ: Մինաս եպիսկոպոսի գլխին այդ օրինակելի դասը տալուց մինչև այսօր Որնակայ տափի հողերը կոչուում են Հակառակահողեր, իսկ մուտն էլ «Հակառակամուտ»:

Ամրոցի արևմտեան ձորն է կոչուում Կայենոյ ձոր. ուր ճգնել է իւր ժամանակուայ մեծ գիտնական Վարդան Բարձրբերդցին, որի մասին պատմութիւնն է այս ակնարկում, թէ՛ «Յետ որոյ դարձաւ Վարդան վարդապետ յարեւելս, նստաւ ՚ի ձորն Կայենոյ ՚ի մենարանն իւր, զոր սուրբ Անդրէ. կոչէին, հանդէպ անառիկ բերդին Կայենոյ, և անդ դադարեալ ուսուցանէր զբազումս ողջամիտ և առողջ բանիւ, համանման գտեալ Վանականայ իւրումն վարդապետի» (Չամչեան): Այս ձորը երևում է, որ մեծ ընտելութիւն է ունեցել, ինչպէս ներկայումս վկայում են թէ հին մեծամեծ տնաբազբեր և թէ աւեր եկեղեցիները, որոնց տեղագրական նկարագրութեանն եմ գառնում այժմ: Կայենոյ ձորը Կերեղայ գետով (Չորոգետով) երկու մասի է բաժանուում, աջ և ձախ, որոնց միացման համար հնումն եղել է մէկ

ահագին կամուրջ, որի մեծ տարածութիւն բռնող խելերը այժմ երևում են «Մարդասպանի» քարափի մօտ, ծիվանքայ և Դերեզի ջրերը խառնուելու արանքում, իւր աջակողմեան խելի մօտ ունենալով մէկ քարեայ մեծ «Թեւաւոր խաչ», որի վերայ կայ հայերէն պատուական արձանագրութիւն, որից մենք օգտուելու ենք մեր պատմական ակնարկութեանց մէջ:

Կայենոյ ձորի աջ մասը սկսուած է «Հաստուճրանդ» կոչուած կապից մինչև ծիվանքայ ջուրը, տարածուելով Որնակայ միապագաղ քարափի տակի ամբողջ լանջի, ևս և Կայան բերդի (Տեսեանցի) արևմտեան լանջի վերայ, իւր մէջ ամփոփելով մեծ-մեծ տնաբազեր, այժմ ծածկուած ցաքի և այլ ծառերով, որոնք ամբողջ հնութիւնը տեսնողի աչքից փակում են: Ներկայումս ջրի ափին մէկ օրավար տեղ վարելահող է բացած, իսկ զբանից էլ գէւյի ցած, գետի ուղղութեամբ՝ մինչև ծիվանքայ ջուրը, օղկուզաբեր այգիներ կան, որոնցից մէկը պատկանում է վանքին զգիմացի բաղ. անունով, որը նուիրել է Սարգիս վարդապետ կրօնաւորը՝ իրբև իւր հայրենի այգի՝ Հաղբատայ վանքին 1568 թ., ինչպէս մի ընկած խաչի արձանագրութիւնն ցոյց է տալիս: Աերև յիշած վարելահողից և թէ վանքի այգու մօտ գտնուած մի ուրիշ այգուց օգտուած է Հաղբատեցի Կուչուրեանց տոհմը, որպէս վանքապատկան տեղ, որպիսին անցել է, ինչպէս մի հին վկայութից երևում է, Մամիկոնեան ցեղից, որոնք այստեղ և՛ս են բնակուելիս եղել, երբ Կայենոյ ձորը իւր եռման մէջ էր գտնուում: Միայն պէտք է ի նկատի ունենալ, որ այդ վերոյիշեալ այգիները շինուել են Կայենոյ ձորի բնակութիւնը վերջանալուց յետոյ. մինչև այժմըս էլ այդ այգիներում ծապան փորելիս, կամ հնձան, կամ ճանճանոց շինելիս, բաց են տնում հին տների պատեր, ահագին կիսատաշ և շատ տեղ էլ անտաշ քարերից շինած:

Կայենոյ ձորի ձախ ափը, որ այժմ գիւղացիք ընդհանրապէս «Աթոռիկ»-են անուանում, բռնում է Մեծ-Աթոռիկի հարաւային կապից մինչև «Մարդասպանի» քարափը, իւր մէջ ամփոփելով, ջրի ափին, 3 օրավարաչափ ձա-

լայ և ապա ահագին տարածութեամբ լսնջ, շատ քիչ ցարուտով ծածկուած, ուր շարէշար ճանապարհորդի աչքին երևում է հին տնաբազերի դասաւորութիւնը, որը տարածւում է՝ արևմտեան կողմից՝ ինչպէս մինչև Մեծ, այնպէս և Փոքր-Աթոռիկի տափը: Մեծ Աթոռիկը երեք կողմից միապաղաղ ահագին քարափի վերայ նստած վարելահող է, հիւսիսից սարասեռով միացած Մաղանայ կողմից եկող Լեղուարի սարամատնին. սա է եղել Կայենոյ ձորի հին բնակիչների գլխաւոր վարուցանքի տեղը: Փոքր Աթոռիկը ցից կանգնած, կալանման քարատափ է, ուր բարձրանում են միայն մէկ տեղից՝ շատ դժուարութեամբ. շրջապատը երեսուն սաժէն է, կենդրոնումն ունի գերեզման սալաձև, գլխին խաչքար, միայն, ափսոս, առանց արձանագրութեան: Նալայից վերև, փոքրիկ ձորալանջում, եղել է աւելի խիտ բնակութիւն. այժմ շաղբատեցիք այստեղ գոմեր են շինել, ուր և՛ ձմեռները իրանց ապրանքը պահում են. հէնց այս գոմերի առաջըն է գտնուում Սուրբ Անդրէի մենարանը, բոլորովին խախտուած, որի միայն հիմնապատերն են երևում. սորանում է գտնուում մէկ մեծ խաչարձան, իսկ տակն էլ սալաքար գերեզման, իւր մէջ ամփոփելով մեր մեծ զիանական Վարդան վարդապետ Բարձրբերդցու մարմինը. գերեզմանաքարի վրայ փորագրուած է թուականն Քրիստոսի—1273, այս մենարանից դէպի հարաւ-արևմուտք, հարիւր սաժէն տարածութեան վրայ, մէկ փոքրիկ բլրի գլխին, գտնուում է և՛ մի այլ, սրբատաշ քարից շինած, մատուռ, որը նայնպէս աւեր է, կողքին ունենալով շատ քանդուած տնաբազեր. մինչև այժմս էլ գիւղացիք այս բլրին «Նկեղեցու դաշ» (բլուր) են անուանում: Մեծ Աթոռիկի տակից, որտեղ և՛ գտնուում է պղնձի հանք, միայն անմշտի, բերուած է եղել մէկ մեծ արխ, որ հասել է մինչև Անդրէի մենարանի տակը, ուր և՛ 'ի հնուց եղել է ջրաղաց: Բնակիչների համար, բացի «մեծ ջրից», իբրև խմելաջուր՝ բերուած է եղել, ահագին հեռաւորութեամբ, Եիկաքարայ պատուական աղբիւրը և հասցրած բնակութեան կենդրոնատեղին. մինչև

այժմս էլ, տեղ-տեղ, երբեմն գունգեր են հանոււմ գետնից։

Կայենոյ Չորի բնակութիւնը, տեղի գրութեան պատճառով, մի քանի մասերի է բաժանուել, որոնցից երկուսի մասին արդէն վերելք խօսեցի. եղել է և՛ մի երրորդ մասը, որ բռնել է փիվանքայ ջրի աջ ափը, սկսած Կայան բերդի տակից մինչև Դերեղայ գետի ափը, մէկ ու կէս վերստ երկարութեամբ, իսկ կէս վերստ էլ լալնութեամբ՝ լանջատեղ, որտեղ այժմ բռնոււմ են «Հաղբատաձորի» պողարեր այգիները։ Այս երրորդ մասը միւս մասերի հետ միացնելու նպատակով շինուած է եղել՝ փիվանքայ ջրի վրայ՝ մի պատուական կամուրջ, որը և՛ այժմ կանգուն կայ, միայն կողքի սլափերը թափուած։ Սոյն կամուրջից հարիւր քալլ հեռուութեամբ կառուցուած կայ մի սիրուն մատուռ, շատ նւրբ տաշուած քարից, որը իւր մեծութեամբ փոքր է Կայան բերդի Աստուածածին եկեղեցուց. գլխի ծածկը քանդուած է, չունի արձանագրութիւն։ Մեր լիշած «Թեաւոր խաչի» արձանագրութիւնը ցոյց է տալիս, որ այստեղ այգի է տնկել և կամուրջի մօտ ջրաղաց շինել Հաղբատայ առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոսը 1086 թ.։ Այս խաչի վրայ կայ երկու արձանագրութիւն, որոնցից առաջինն է. «Ի թուին ՇԼԵ. Ես Տէր-Սարգիս՝ առաջնորդ սուրբ ուխտիս Հաղբատայ՝ շինեցի զջրաղացս եւ արարի ազատաղաց. արկի եւ զայգիս, տնկեցի եւ զղրախտս զանազան մրգաբերօք՝ ի փառս սրբոյ Եշմնին եւ ՚ի վայելումն տանս Հաղբատայ։ Արդ եթէ որ զսա ՚ի Հաղբատայ հանէ կամ աւերման պատճառ յինի ՚ի մեծաց կամ ՚ի փոքունց՝ կամ առաջնորդ, որ սմա շինութիւնն չ'ջանայ, այնպիսիքն որոշեալ լիցին յԱստուծոյ եւ ընդ որդւոյն կորստեան ելցին ՚ի խաւարն արտարին եւ յորդն անրուն։ Երկրորդ արձանագրութիւնն է — «Ես Տէր Սարգիս՝ առաջնորդս Հաղբատայ՝ կանգնեցի զնըշանս Տէրունական, զէն հաւատացելոց եւ պաշտպան թագաւորաց մերոց Կիրիկէի, Սմբատայ եւ Դաւթի — զարմի սոցա։ Իսկ թէ՛ այժմեան այգիները հին բնակութեանց տեղերն են շինած, այդ զարձեալ ցոյց է տալիս այն փաստը,

որ մինչև այժմս էլ այգիներում շատ հին տնաբազեր են դուրս գալիս: Այստեղի բնակչաց համար եղած գերեզմանատունն էլ մինչև այժմ յայտնի է, որ գտնուում է Երզրնկեանց ազգին պատկանած սեպհական այգիների գլխին. կան շատ տաշած սալաքարեր, բոլորն էլ առանց արձանագրութեան. այստեղ է և՛ Ս. Ստեփաննոսի հսկայական խաչքարը: Գերեզմանների մէջ միայն մէկն է աչքի ընկնում, այն է՝ ագաւաւի տապանը, որի տակի սալաքարի վրայ մէկ փոքրիկ օրօրոցաձև քար կայ, մի արշին երկարութեամբ, իսկ կէս արշին լայնութեամբ: Սրա մասին աւանդաբար պատմում են, թէ՛ մի քանի մշակներ մի շոք օր մի տեղ հունձ էին անում. ճաշի ժամանակ տանից թանէ սպաս են բերում. դեռ մշակները հացի չնստած, մի օձ ընկնում է սպասի մէջ և խեղդւում. մի ագաւաւ այս նկատում է և զանազան թռիչքներով աշխատում է մի կերպով մշակներին հասկացնել սպասի թունաւորուիլը օձով. բայց չի յաջողում, ուստի ինքը ընկնում է սպասի մէջ, որ օձին հանէ, բայց խեղդւում է: Մշակները այս նկատելով, խառնում են սպասը և տեսնում, որ օձը մէջը սատկել է. նոր են հասկանում ագաւաւի առաջուայ զանազան թռիչքներով և կրուկրոցով արած նշանների միտքը, ուստի և՛ շնորհակալ են լինում Աստծուց, որ ագաւաւով իրանք ազատուեցան մահից: Ի նշան իրանց երախտագիտութեան՝ ագաւաւին թաղում են և այս փոքրիկ տապանն էլ վերան դնում, ագաւաւի տապանն անունը տալով: Այս գերեզմանատանից սկսած՝ զարձեալ տնաբազեր են երևում լանջի վրայ, որոնք անցնում են «արտ» կոչուած տեղով և ապա ընդարձակ Եէրէկի լանջով, ճիշտ Կայան բերդի արևելեան կողմում, որը և՛ շարունակւում է մինչև քարուկրեայ կամարակապ պատուական և ամուր ու հին կամուրջը (Ջրաղացի շորում), որի վերայով է անցնում ճանապարհը Հաղբատից դէպի Կայան բերդը: Եէրէկի լանջի տնաբազերի թիւը անհաշիւ է. այժմ ծածկուած են թէ կակալի և թէ այլ ծառերով: Սրա գլխին, միտապաղ ջարափի տակին, կան երեք նշանաւոր այրեր, որոնք

ահաւփախի ժամանակ մեծ օգնութիւն են արել Հաղբատեցոց, ևս և Կալենոյ-ձորացիներին: Ամենամեծն է Ջարեհ իշխանի (կամ այժմեան բարբառով՝ Ջարնի) այլը, որ բաւականին խորն է, քարափի ստորոտումն, և առաջից կապած հաստ պատով. ունի մէջը «կաթեթան» աղբիւր, որը պաշարուածներին չուր է մատակարարել: Այս տեղ է դանուել Հաղբատայ փարթամ մատենագարանի գրքերի մեծ մասը, որ կրակի կերակուր է դարձել՝ շնորհիւ մի ազէտ տիրացուի, հաւատացնելով, թէ՛ բէրձէնի (յոյնի) գրքեր են: Երկրորդ այլն է «Պարանի» այլը, դարձեալ հաստ և բարձր պատով փակած, քարափի մէջ. սորանից երեք՝ սաժէն հեռաւորութեամբ՝ քառաժայռում՝ կայ մէկ պատած գուռն, ծակ այլ անունով, որտեղից սլ. Աղ. Երիցեանցը շատ քարացած մագաղաթեայ գրքեր հանել տուեց, որոնք նոյնպէս Հաղբատայ վանքի մատենագարանից են եղել: Երրորդն է՝ Եէրէկի այլը, որի մօտ է դանուում «Տեսեանցի» նետը, մէկ փոքրիկ այրաձև տեղ, որի մէջ կայ մէկ խաչ և մի քանի էլ նետաձև սուր երկաթներ: Նետ ասելով, ես կարծում եմ, որ այստեղ կանգնած լինէին պահապաններ թէ Եէրէկի բնակիչներին պաշտպանելու և թէ թշնամիների Կայան բերդին մօտենալը արգելելու: Այսպիսի մի նետ, միայն մատուռաձև, կայ և՛ Սանահնի մօտ եղած «Նոր-Վանքի» ս. Կարսպետ ուխտատեղւոյ մօտ: Այստեղ ևս նետն պաշտպանութեան նպատակով է շինուած: Հետաքրքրելին այն է, որ այստեղի նշանաւոր ուխտատեղիները, որոնք հնուց թիտ բնակութեան կենդրոնավայրեր են եղել, իրանց նետերն են ունեցել, այն ևս իրանցից հեռու, ճանապարհների վերայ:

Բաւականաչափ բնակութիւն է եղել և՛ Տեսեանցի (Կայան) բերդի լանջումն (հարաւային կողմում), որի նշաններն են՝ դարձեալ՝ եղած տնարագերը. այստեղ է ահագին միապաղաղ քարափի մէջ դանուած Լաստու այլն, պատած, ուր բարձրանալիս են եղել սեպերի վերայ ամրացրած լաստերով, որոնցից մի քանիսը այժմ կան: Իբրև պաշտպանու-

Թեան տեղեր են եղել և՛ այս լանջի երկու քարայրերը, — մէկը ճանապարհի վերայ, իսկ միւսը՝ տակը:

Այսպէս ուրեմն՝ Կայան բերդի շուրջը՝ լանջերում և թէփաքրիկ տափարակներում հին ժամանակները անթիւ բնակութիւններ են եղել՝ մէկ կողմից բուն Կայենոյ ձորը, իւր երեք մասով, իսկ միւս կողմից Շէրէկն ու Տեսեանցի լանջն, իրանց համար միակ պաշտպանութեան տեղ ունենալով ինչպէս Կայան բերդը, այնպէս և՛ հաստապատ ու անառիկ քարայրերը:

Գրիգորիս քահանայ Նրզնիկեանց.

